



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

04.08.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/29

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ռաումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.07.2017թ. թիվ 04/27-1/12574-17 գրությամբ «Շելդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 28.06.2017թ. թիվ ԴՎԱ/2015 գրության հիման վրա, 10.07.2017թ. թիվ 04/27-1/12574-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Շելդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Շելդա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 12.07.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/12704-17 գրությամբ դիմել է «Շելդա» ՍՊԸ-ին և վերջինիս տեղեկացրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 28.06.2017թ. թիվ ԴՎԱ/2015 գրության հիման վրա, 10.07.2017թ. թիվ 04/27-1/12574-17 գրությամբ խորհրդում նախաձեռնել է «Շելդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ և խնդրել է ներկայացնել գրավոր կարծիք, սակայն «Շելդա» ՍՊԸ-ն խորհրդին չի ներկայացրել իր դիրքորոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով խորհրդի 18.07.2017թ. ժամը 11:30-ին նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 28.06.2017թ. թիվ ԴՎԱ/2015 գրությամբ ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Շելդա» ՍՊԸ-ն, այնուհետև Ընկերությունը armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Շելդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագրի քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 71-րդ կետը, կասեցրել է նիստը և հարցում է ուղարկել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված պայմանագրի իսկությունը ճշտելու համար:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի եզրակացության հիման վրա գնահատող հանձնաժողովը մերժել է «Շելդա» ՍՊԸ-ի հայտը, քանի որ պայմանագրի իսկությունը չի համապատասխանում ներկայացվածին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 18.07.2017թ. ժամը 11:30-ին նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 28.06.2017թ. թիվ ԴՎԱ/2015 գրությամբ ներկայացրած դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/29 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/29 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի Մաս I-ի 2-րդ կետի 2.3-րդ ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

3.1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը

(կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Շելդա» ՍՊԸ-ն «Օստ-Շին» ՍՊԸ-ի հետ կոնսորցիումով հայտ է ներկայացրել:

4. «Շելդա» ՍՊԸ-ն հայտի N 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է մսամթերքների և մսի սննդային ենթամթերքների մատակարարման պայմանագիր, որի ընդհանուր արժեքը կազմել է 37 097 540 ՀՀ դրամ և պարտավորվում է հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:**

5. «Շելդա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի կոնսորցիումը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով, **որի ընդհանուր արժեքը կազմել է 50 937 696 ՀՀ դրամ:**

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2016թ. թիվ 3 արձանագրության 3.1 կետով կայացված որոշմամբ «Շելդա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի կոնսորցիումը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

7. «Շելդա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի կողմից որպես մասնագիտական փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել է «Շելդա» ՍՊԸ-ի և «Լիկա 1» ՍՊԸ-ի միջև 20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1 մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), **որի ընդհանուր արժեքը կազմել է 37 097 540 (երեսունյոթ միլիոն իննսունյոթ հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:**

8. «Լիկա 1» ՍՊԸ-ի կողմից «Շելդա» ՍՊԸ-ին 22.11.2016թ. տրված թիվ 03 տեղեկանքի համաձայն՝ «Շելդա» ՍՊԸ-ն բարեխղճորեն և պայմանագրով նախատեսված ժամկետներում իրականացրել է 20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1 պայմանագրով նախատեսված բոլոր մատակարարումները՝ 37 097 540 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 8 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հրավիրվել է գնահատող հանձնաժողովի նիստ, որտեղ քննարկվել է «Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ի գրությունը, որով «Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ն հայտնել է, որ «Շելդա» ՍՊԸ-ն որպես մասնագիտական փորձառություն ներկայացրել է «Լիկա 1» ՍՊԸ-ին բարեխղճորեն մատակարարած 37 097 540 ՀՀ դրամի համանման ապրանքների պայմանագիրը, որը իրականությանը չի համապատասխանում, հիմք ընդունելով վերը նշված գրությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է, առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով, կասեցնել նիստը և հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե և նիստը շարունակել պատասխան ստանալուց հետո:

10. 27.04.2017թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Շելդա» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից հայտով ներկայացված մասնագիտական փորձառությունը հավաստող փաստաթուղթը /պայմանագիրը/ և դրա վերաբերյալ տրված պատշաճ կատարման տեղեկանքը /նշված գումարը/ չեն համապատասխանում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությանը և 2-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչել «Էլիտ Պրոդ» ՍՊԸ-ին:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.07.2017թ. թիվ 04/27-1/12574-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 28.06.2017թ. թիվ ԴՎԱ/2015 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Շելդա» ՍՊԸ-ի և «Լիկա 1» ՍՊԸ-ի միջև

20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1 մատակարարման պայմանագիրը՝ կից փաստաթղթերով՝ հայտնում է հետևյալը.

«Քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածը սահմանում է, որ՝

1. Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2. Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

«Քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ **պարտավորությունները պետք է կադարվեն պարշաճ՝** պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Նույն օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ **պարշաճ կադարումը դադարեցնում է պարտավորությունը:** Պարտատերը, ընդունելով կատարումը, պարտավոր է պարտապանի պահանջով նրան ստացական տալ՝ կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, **եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: **Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:**

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: **Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ փվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն փոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված**

ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ **տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝**

4) **մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:**

Այսպես ՀՀ պաշտպանության նախարարությունը սննդամթերք ձեռքբերելու նպատակով կազմակերպել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/17» ծածկագրով ընթացակարգը, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Շելդա» և «Օստ-Շին» ՍՊԸ-ների կոնսորցիումը:

Ընթացակարգի հրավերով նախատեսվել էր, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

¹ Հղումը կատարված է մինչև 09.02.2017թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման մեջ փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» N 104-Ն որոշումն ուժի մեջ մտնելը:

Այսպես «Շելլա» և «Օստ-Շին» ՍՊԸ-ների կոնսորցիումի կողմից հայտի թիվ 4 հավելվածով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր արժեքը կազմում է **50 937 696**

ՀՀ դրամ:

Կոնսորցիումի կողմից որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել է Պայմանագիր, որի ընդհանուր արժեքը կազմում է **37 097 540 ՀՀ դրամ:**

Այսպիսով, ուսումնասիրելով վերը նշված փաստերը, Խորհուրդն արձանագրում է, որ Պայմանագիրը գումարային արտահայտությամբ համապատասխանում է Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջին:

Միևնույն ժամանակ Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, **ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝** տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը **կամ փվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.**

Խորհուրդն արձանագրում է, որ «Շելլա» և «Օստ-Շին» ՍՊԸ-ների կոնսորցիումի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «Լիկա 1» ՍՊԸ-ի կողմից «Շելլա» ՍՊԸ-ին 22.11.2016թ. տրված թիվ 03 տեղեկանքը, որի համաձայն՝ «Շելլա» ՍՊԸ-ն բարեխղճորեն և պայմանագրով նախատեսված ժամկետներում իրականացրել է 20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1 պայմանագրով նախատեսված բոլոր մատակարարումները՝ 37 097 540 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Հետևաբար «Շելլա» և «Օստ-Շին» ՍՊԸ-ների կողմից պահպանվել է Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, քանի որ վերջինիս համաձայն, պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար ներկայացվում է տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը **կամ փվյալ պայմանագրի**

կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, որը և ներկայացվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

Հետևաբար պայմանագրի կատարումն ընդունած կողմից (տվյալ դեպքում՝ «Լիկա 1» ՍՊԸ-ի կողմից տրված) գրավոր հավաստումն արդեն իսկ բավարար է պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար:

Իսկ ինչ վերաբերվում է Պատվիրատուի այն պնդմանը, որ Ընկերության կողմից ներկայացված նախկինում կատարած Պայմանագիրը և «Լիկա 1» ՍՊԸ-ի կողմից «Շելլա» ՍՊԸ-ին 22.11.2016թ. տրված պատշաճ կատարման տեղեկանքը գումարային արտահայտությամբ տարբերվում են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարկային հաշիվներից, ապա այս մասով Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից նախկինում կատարված Պայմանագիրը պատշաճ կերպով կատարվել է այնքանով, որքանով որ պահանջվել է «Լիկա 1» ՍՊԸ-ի (Պայմանագրի կատարումն ընդունած կողմի) կողմից:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ հարկային հաշիվները գումարային արտահայտությամբ ևս բավարարում են Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջին:

Այսպես, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Խորհուրդն, ուսումնասիրելով «Շելլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, գտնում է, որ Ընկերության կողմից հայտի թիվ 3.1 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի հանդիսանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 10.07.2017թ. թիվ 04/27-1/12574-17 գրությամբ «Շելդա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00444765) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄԷԵՐ ԱՆԱՆՅԱՆ